



Լ. ԱՄԱՏՈՐԻ

ՄԵՍՐՈՊ ԹԱՂԻԱԴՅԱՆ

(Մանվան 100-ամյակի նախօրյակին)



Մեսրոպ Թաղիադյանը ծնվել է 1803 թվին Նրեանում: Մանուկ հասակից զրկվելով հորից, որբացած երեխան մնում է տատի մոտ, ապա 1816 թվին Նրան տանում են Էջմիածին և Ներսես կաթողիկոսի կարգադրությամբ հանձնում քուրդ անվանի Հովհաննես վարդապետին, որպեսզի գրագիտություն սովորեցնի փոքրիկ Մեսրոպին: Նա սովորում է կարդալ սաղմոս, ժամագիրք, շարական:

Նույն թվականին Էջմիածին է գալիս հայտնի հայագետ Պողոս վարդապետ Ղաթաղացին, որի մոտ ուրիշ դպիրների և սարկավազների հետ Մեսրոպը սկսում է ուսանել գրաբար քերականություն, որ այն ժամանակ ամենարարժք գիտությունն էր համարվում: Այնուհետև նա պարապում է կոնդակներ գրելով և հին ձեռագրեր արտագրելով: 1821 թվին Մեսրոպին տալիս են դպրության չորս աստիճան և ձեռնադրում սարկավազ: 1822 թվին ուսումը շարունակելու նպատակով նա ցանկանում է մեկնել Փարիզ, բայց պարսից պատերազմի պատճառով փոխում է ճանապարհը և ուղևորվում Հնդկաստան, ուր մի ժամանակ ապրում է Դաքա քաղաքում Նրուսաղեմի Արրահամ վարդապետի մոտ: Մեսրոպի խնդրանքով վարդապետը միջնորդում է, որպեսզի նա անգլիացի Ռիչնալդ Հիբբե կալսկոպոսի ճեմարանում անգլերեն սովորի: Եպիսկոպոսը սիրով հանձն է առնում և կրթության ծախսն էլ վերցնում իր վրա: Այնուհետև այդ կալսկոպոսը որպես կանոն երկու հայ սովորողի ընդունում է անգլիական հոգևոր ճեմարանում և ձրի կրթություն տալիս նրանց: 1826 թվին մտնելով ճեմարան

նա այնտեղ մնաց մինչև 1830 թվականը և անգլերենից հայերեն թարգմանեց Հիբբե կալսկոպոսի «Դիցաբանություն» և «Պաղեստին» գրքերը, որոնք տպագրվեցին 1830 թվականին:

1831 թվին Թաղիադյանը թողնելով ճեմարանը մեկնում է Պարսկաստան և Նոր-Ջուղայի հայոց ուսումնարանում զբաղվում ուսուցչությամբ: 1833 թվին հրավիրվում է Էջմիածին որպես ուսուցիչ և միաժամանակ վարում Հովհաննես կաթողիկոսի քարտուղարի պաշտոնը: Սակայն մեկ տարի շանցած Ջուղայի բնակչության խնդրանքով կրկին վերադառնում է Նոր-Ջուղա և նշանակվում ուսուցիչ: 1835 թվին նա մեկնում է Թավրիզ և նշանակվում արքայազն Մելիք-Ղասում Միրզայի անդլերենի դասատու: 1838 թվին Թաղիադյանը նորից վերադառնում է Էջմիածին և ապա այնտեղից տնցնում Կոստանդնուպոլիս: Պրսում մի տարի հագիվ մեալուց հետո, մեղադրվում է իրեն բողոքական (նա կապեր ուներ ամերիկացի միսիոներների հետ), ենթարկվում է հալածանքի, Կոստանդնուպոլսից փախչելով կրկին ուղևորվում է Հնդկաստան, ծանապարհի վերի է ընկնում արաբների ձեռքը, տարվում Արվիլայի անապատը, որտեղից մի կերպ ազատվելով ընկնում է Հնդկաստան և ապաստան գտնում Կալկաթայի անգլիական ճեմարանում: Կալկաթայում նա տպագրության է հանձնում «Պատմություն հին Հնդկաստանի» գիրքը: Եռուով հայ վաճառականները Թաղիադյանի աշակցությամբ հիմնում են «Արարատյան ընկերություն»-ը, որի նպատակն էր լրագիր հրատարակելով բարձրացնել տեղական ազգաբնակչության մտավոր ու կուլտուրական մակարդակը:

1845 թվին Թաղիադյանի խմբագրությամբ սկսում է լույս տեսնել «Ազգասեր» լրագիրը, որն ընդհատումներով տևեց մինչև 1852 թվականը։ Այս լրագրի լեզուն նախ անշարժ հարար էր, ապա Հնդկաստանի հայության միջնորդությամբ դարձավ դրաբար։

Թաղիադյանը շրջել է Հայաստանի բոլոր կողմերը, եղել է նաև Շուշի, Գանձակ, Ռիֆ-լիս։ Տիրապետում էր պարսկերեն, հունարեն, լատիներեն և անգլերեն լեզուներին։

1828 թվին, երբ առաջինը դուրս գրավեց Երևանը, Թաղիադյանը մի ընդարձակ նամակ ուղարկեց իր համաքաղաքացիներին։ Այդ նամակը կարևոր փաստաթուղթ է։ Այն վկայում է Թաղիադյանի առաջին օրինադրության, այն մեծ հույսերի ու ակնկալությունների մասին, որ նա կապում էր Հայաստանի նվաճման հետ Ռուսաստանի կողմից։ Ողջունելով Երևանի բնակիչներին, նա պատմական մեծ դեպքի առթիվ իր անսահման ուրախությունն է միացնում նրանց հրեմվանքին։ Այդ նամակը միաժամանակ և լուսավորության քարոզ է. «Այն, իմ լավ քաղաքացիք, ա՛յն, հոգիս հարա է կանչում, հին խմբին թողեք, նոր ազգի լուսավորության և պայծառության հետևեցեք»։ Թաղիադյանն իր համաքաղաքացիներին խորհուրդ է տալիս Երևանում մի դպրոց բանալ, որ երեխաները «դատարկ բույներում» ման չգան։ Նա խորհուրդ է տալիս հետևել Ֆրանսիացիներին ու անգլիացիներին և առաջարկում է աղջիկներին նույնպես կրթության տալ։ Եթե բացվի այդ դպրոցը, ասում է նա, ինքը պատրաստ է թողնել կալվաթան և նորից դալ հայրենի երկիրը ուսուցչություն անելու։

1857 թվին նա նորից հանապարհ է ընկնում Պարսկաստան, Նոր-Ջուղայում ուսուցչություն անելու, սակայն չհասած Նոր-Ջուղա վախճանվում է Երրորդում 1858 թվին։

Թաղիադյանը, ինչպես և այս շրջանի գործիչների ու գրողների մեծ մասը, բառի իսկական իմաստով լուսավորիչ է։ Նրա ողջ գործունեությունը միայն մի նպատակ էր հետապնդում՝ լուսավորել հայ ժողովրդին, դպրոցներ բանալ, լրագիր հրատարակել, դրքեր տպագրել, գիտություն տարածել։

Ինչնով մանկավարժ նա երեխաների համար կազմել ու գրել է իր ժամանակի համար շատ արժեքավոր աշխատանքներ՝ «Մեսրոպյան ալբրենարան» անունով։ Բացի այդ նա պատմագետ է։ Նա գրել է Հնդկաստանի պատմությանը նվիրված մի հատոր, և «Ճանապարհորդությունն ի Հայաստան» գիրքը, որ նրա թողած ժառանգության մեջ մի առանձին արժեք ունի։ Բացի այն առատ նյութից, որ դա տալիս է ազգագրական ուսումնասիրությունների համար, Թաղիադյանի ուղեգրությունն

ունի մեծ արժեք նաև պատմության համար։ Դա ժամանակակից վկայությունն է դարաշրջանի մասին։ Թաղիադյանը տվել է ոչ միայն ժողովրդի վարքն ու բարքը, այլև պարսկական բանությունների ու շարաշահումների նկարագիրը, դուռացիության հորատկան վիճակը։ «Նրանք ցանում էին, — ասում է նա, — և հունձի ժամանակ պարսիկ բռնակալը ուղարկում էր նրանց կալը մեշտեղից կես բաժին անելու։ ապա մնացածից կտրում էր արքունի տուրքը, այնպես որ նրանց բան չէր մնում ծախսերի համար։ Եթե պատահում էր, որ երկնառաք պատմահասի պատճառով արտերը ստերշանում և բերք չէին տալիս, նա այդ վնասը ժողովրդի զանցառությանը վերագրելով՝ անում և դավում էր, ինչ որ նրանց տանը գտնում էր, կահույք և կարասիք, իսկ երբ այդպիսի չկային, նրանց կանանց և երեխաներին՝ որպես վնաս իրեն հասանելի բաժին։ նրանցից ձեռնելով քամու էր ոսկիները իր հղիացման համար։ Ամբողջ երկիրը կեղեքելով՝ մաշում էր և նրանց քրտինքով Ղազվինում դաստակերտներ էր շինում և իր զանձը հոխացնում»։

Բացի այդ, հանապարհորդության մեջ նկարագրված է էջմիածինը, նրա ներքին կյանքը, միաբանության անդամների հարաբերությունները։ Այս գրքի մեջ է, որ հեղինակը հանդես է գալիս հորատափրության դեմ։ Թաղիադյանը հայտնի է նաև իբրև բանաստեղծ և վիպասան։ Թաղիադյանի մանր երկերի մեջ շատ ուժեղ է հայրենասիրությունը։ Հայրենասիրական զգացման մի քանի արտահայտությունները հայտնի են մեր գրականության մեջ. որպես օրինակ կարելի է հիշատակել «Տէր, կեցո՛ւ» աղջասիրական օրհներգը։ Նա հորինել է նաև մի քանի երգիծական ոտանավորներ։ Հիշատակության արժանի են Վեհարանի «Թքաման-թանաքաման» հանապարհատից գրված մի քառատողը և «Յուցակ ստացեալ աղխտից», որտեղ նկարագրված են այն «համարությունները», որ նա ստացել էր էջմիածնում Հրեղիաստանից վերադառնալուց հետո։ Մյուսը՝ ժողովրդական լեզվով գրված նրա ոտանավորների փոքրամիջ շարքն է, որը մի փորձ էր դրաբարից աշխարհաբարին անցնելուն։

Թաղիադյանի շափածո գրվածքների մեջ տարբն տեղ է գրավում «Սոս և Սոնդիպի» պոեմը։ Հեղինակը այդ պոեմի մեջ պատմում է, թե ինչպես հայ երիտասարդ Սոսը Հրեղիաստանում սիրում է հեղիկ Բազավորի գեղեցիկ աղջկան՝ Սոնդիպին։ Սոնդիպին սիրում է ոչ միայն Սոսին, այլև նրա Հայրենիքը՝ Հայաստանը։ Սիրտ առն ոչնչանում են

աղագային բոլոր տարբերությունները: Եվ Սոնդիպին թողնում է իր հայրենի Հնդկաստանն ու Սոսի հետ միասին փախչում Հայաստան: Այստեղ Վարդավառի տոնի ժամանակ Սոնդիպին հայ աղջիկների հետ դաշտերում ծաղիկներ էր քաղում, երբ վրա է հասնում հայրը՝ ուռա Սարաջը, հափշտակում նրան և դռնում կուռքերին:

Սոսի և Սոնդիպիի դժբախտ սիրո պատմության վրա կառուցված պոեմը բաղկացած է 5 մասից: Նախերգանքում Սոսը Սոնդիպիի դերերգմանի վրա ընկած ողբում է իր կորցրած սերը: Աստղիկը հարցնում է Սոսին նրա լացի պատճառը: Սոսն ասում է իր և Սոնդիպիի սիրո պատմությունը, որ նկարագրված է մնացած երգերի մեջ:

Ոչ միայն լեզվով, այլև կառուցվածքի անհնազանդություններով պոեմը հորինված է դասական գրվածքների հետևությամբ:

Պահպանելով դարբարը՝ Թաղիադյանն ստեղծել է աշխարհիկ բովանդակությամբ երկու վեպ՝ «Վեպ Վարդգեսի» և «Վեպ Վարսենիկան»: Սրանք ժամանակակից և պատմական վեպեր չեն: Այն, ինչ որ պատմում է հեղինակը Տուհաց իշխան Վարդգեսի, Երվանդ թագավորի և նրա դեմ ըմբոստացող նախարարների, Արմավիր քաղաքի մասին և այլն, պատմական եղելություն չէ: Այդ դեպքերը չեն առնված հայ հայտնի հին վեպերից: Ինչ որ կա այդտեղ հին հայկական վեպից՝ «Հատուած գնացեալ» փոքրիկ կտորն է, որ բերում է հորեմացին իր պատմության մեջ: Այսպիսով Վարդգեսի ամբողջ վեպը Թաղիադյանի երևակայության արդյունքն է: Նրա մեջ հեղինակը պատմում է, թե Հայաստանի հին քաղաք Արմավիրի պարիսպների տակ մի պատանի, Վարդգես անունով, շրջում էր անտիլի և անապատում: Այդ ժամանակ երևում են քաղաքի վրա սարսափ տարածող ավազակները և պանդուխտ պատանին միանում է նրանց, դառնում հայտնի ավազակապետ՝ Արեղեն անունով: Բայց Վարդգեսն ավազակ է դառնում՝ ավազակությունը ոչնչացնելու նպատակով: Իր սիրագործություններով Վարդգեսն ազատում է նրվանց արքային դավադրի իշխաններից և ամուսնանալով թագավորի քրոջ՝ Հայկանդուխտի հետ դառնում է մեծ նահանգների իշխան և կառուցում է Վարդես ավանը: Վեպում արտահայտված է հեղինակի հասարակական իդեալը, որը քաջ, հավատարիմ, թագավորին ծառայող իշխանի իդեալն էր:

«Վեպ Վարսենիկան»-ի բովանդակությունը հետևյալն է: Աղվանից թագավոր Վաչագանը սովորություն ուներ ծալված շրջելու քաղաքը և լսելու իր ժողովրդի խոսակցությունները: Մի գիշեր նա լսում է Գուրգենի խոսակցու-

թյունը՝ որ ինքը կուղևնար ամուսնանալ թագավորի աղջկա հետ, եթե նույնիսկ օժիտ չտար թագավորը և վճիղեր նրան երկրից: Մյուս օրը թագավորը կատարում է Գուրգենի ցանկությունը: Գուրգենը և Վարսենիկը ամուսնանում են և վտարվում Աղվանքից: Իրենց քաղաքից հեռու նրանք հաստատվում են ապրելու: Գուրգենը մշակություն է անում, Վարսենիկը դրադում է ձեռագործով: Աղքատ էր ու դառն նրանց կյանքը, բայց երջանիկ էին փոխադարձ սիրով: Եվ ահա Վարսենիկն ու Գուրգենը դժվարին ճանապարհորդություններից և առասպելական, դիվական որոգայթներից հետո իրենց հերոսությունը ու քաջությունը հասնում են իշխանական փառքի:

Փոքր չէ վեպի գաղափարը: Նրա հերոսուհին՝ աղվանից թագավորի աղջիկ Վարսենիկը համաձայնում է մի աղքատ մարդու հետ ամուսնանալ, թողնել իր հոր թագավորական ապարանքը և նվիրվել իր ամուսնուն «աշխատանքով և աստվածասիրությամբ»:

Չեղինակը Վարսենիկի առասպելական անձնավորության մեջ տվել է խելոք, համեստ, աշխատասեր տանտիրկնոջ կերպարը: Կնոջ այս իդեալը դրված է Աստուծո, իշխանի և Եկեղեցու դեկավարության ու հովանավորության տակ, առանց որի նա չի կարող կյանքում որևէ հաջողություն ունենալ:

Վեպում հայրապետը և թագավորը կարևոր տեղ են բռնում: Հայրապետը հարգված է, ներկայացված է որպես բարձր անձնավորություն, որի իշխանությունն առավել բարձրացնում են տիկինն ու օրիորդը՝ Թադուհին և իշխանուհին, Մյուս կողմից թագավորն իմաստուն է, խելոք և լավ կառավարող:

Թաղիադյանի սիրային բանաստեղծություններն ու պոեմները նվիրված են իր կնոջը՝ Թանկում խաթունին, որին մեծարում է նա և որի անժամանակ մահը ողբում է անմխիթար: Այդ բանաստեղծությունները, որ գրված են գրաբար լեզվով, խոսում են Աստուծո, երկնքի, Քրիստոսի, խաչի, արարչության, տաճարի և այլ բազմաթիվ բարեպաշտական նյութերի մասին, որոնց միջոցով նա ուզում է բարձրացնել իր սիրածին, նրան տալ աստվածային շնորհ:

Թաղիադյանի բանաստեղծությունների մեջ կան էջեր, որոնք գրված են պարզ, հասարակ արվեստով, հասկանալի գրաբարով կամ դավառական բարբառով: Նրանց մեջ երևան են գալիս ժամանակակից կյանքի հետաքրքրական կողմերը, բանաստեղծի վերաբերմունքը դեպի կյանքի ու կենցաղի խրնդիները, դեղջիկական կյանքի ու աշխատանքի և նրա հերոսի պարզ նկարագրությունը, որոնք հեռու են կեղծ-գասական գրականու-

թյունից և իրենց վրա կրում են ժողովրդական բանահյուսության ազդեցությունը: Եվ չնայած նրանք թուրջ գրական մշակման չեն ենթարկված, այնուամենայնիվ ամենի արժեքավոր են, քան նրա թուր դարձերը: Գրափայլումն օրինակն է «Միրելի Միրվարդ իմ բարով ողջանաս» բանաստեղծությունը: Նույնպիսի պարզ ձևով և անբռնադրուսիկ արվեստով նա պատկերում է էջմիածնի կյանքն ու կենցաղը, նրան ու կացը, դաստիարակության հին ձևերն ու մեթոդները: Այս տիպի ներգերի մեջ նա կարողանում է երբեմն խառնած ձևով ժամանակի պատկերը գծել:

Թաղիադյանի լավագույն դորձերի շարքը պետք է դասել գյուղական աղջկա հայտնի երգը, որ թեև գրված է դարար, բայց բովանդակության տեսակետից անկասկած պարունակում է իր մեջ նոր ժողովրդական պոեզիայի կարևոր գծերը: Այդ բանաստեղծության մեջ ներկայացված է մի պանդուխտ հայ աղջիկ, որ Գանդեսի ամենի՜ն դամբարան է գործում և իր աշխատանքի միջոցով պահպանում իր համեստ գոյությունը: Պետք է, սակայն, ասել, որ Թաղիադյանը երբեմն միայն անդրադառնալով ժողովրդական լեզվին միշտ հարադատ մնաց դարարին:

